ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿԱՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՑՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՈՐ Ի ՍԵՆԹ ՔԱԹՐԻՆԶ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովի առիթով համայն հայութեան հոգևոր կենտրոն Աստուածկառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում ժողովի բոլոր մասնակիցներիդ:

Սիրելի զաւակներ Մեր, 2015 թուականը նուիրական տարի է մեր ժողովրդի կեանքում: Ազգովի ոգեկոչում ենք Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը և մեր խոնարհումը բերում մեր բիւրաւոր անմեղ զոհերի յիշատակի առջև:

Միլիոնաւոր հայորդիներ գաղթի, սովահարութեան, դաժան տանջանքների ու փորձութիւնների մէջ, մինչև իսկ մահուան վտանգի առջև շարունակեցին «հաստատուն կալ եւ մնալ ի հաւատ, ի յոյս, ի սէր»՝ վկայելով իրենց հոգու անխախտ հաւատարմութիւնը առ Քրիստոս Փրկիչ մեր Տէրը: Մխիթարութիւն է մեր ազգի զաւակների համար, որ Հայոց Ցեղասպանութիւնից մէկ դար անց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին սրբոց դասում կարգեց «վասն հաւատոյ և վասն հայրենեաց» նահատակուած մեր հայրերին՝ որպէս խաղաղութեան, արդարութեան ու մարդասիրութեան բարեխօսներ:

Փառք ենք մատուցում առ Աստուած, որ Ցեղասպանութիւնը վերապրած մեր ժողովուրդը Աստուծոյ շնորհով դիմակայեց անյաղթահարելի թուացող բոլոր դժուարութիւններին ու փորձութիւններին և վերակերտեց իր նոր, լուսաւոր կեանքը մեր հայրենիքի արևելեան հատուածում և Սփիւռքում: Այսօր գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ, որ Կանադայում հաստատուած Մեր զաւակները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ միասնական ջանքերով ու յանձնառութիւններով կերտեցին կանադահայ համայնքի շինութիւնն ու պայծառութիւնը: Ձեր հաւատաւոր հայրերը եկեղեցիներ, դպրոցներ ու ազգային հաստատութիւններ հիմնեցին և նախանձախնդրութեամբ հոգ տարան, որպէսզի հայրենիքից հեռու հասակ առնող նոր սերունդները հաղորդ լինեն մայրենի մեր լեզուին, մեր պատմութեանը և ազգային մեր աւանդներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհունակ սրտով Մեր բարձր գնահատանքն ենք բերում Թեմական Պատգամաւորական ժողովի հոգևորական ու աշխարհական բոլոր մասնակիցներիդ, Թեմական Խորհրդի, Տիկնանց ու Երիտասարդաց Միութիւնների անդամներին, որ Գերաշնորհ Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի բարեջան առաջնորդութեամբ ներդնում էք Ձեր ժամանակն ու կարողութիւնները՝ ի խնդիր թեմական կեանքի նոր ձեռքբերումների ու յաջողութիւնների: Մեր յորդորն է ձեզ, որ հաստատուն պահէք ձեր եկեղեցանուէր ընթացքը և շարունակէք ձեր ազնիւ ծառայութեամբ պայծառութիւն յաւելել մեր ժողովրդի և Սուրբ Եկեղեցու կեանքին:

Ի խորոց սրտի Մեր հայցն է, որ Բարձրեալն Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Կանադայի Հայոց Թեմը, հանապազ օրհնի և Իր բազում պարգևներով առատապէս շնորհազարդի կանադահայ համայնքը՝ հոգևոր ու ազգային իր հաստատութիւններով:

Շնորհք, սէր և ողորմութիւն Տեառն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 28-ն Մայիսի
յամի Տեառն 2015 և ի թուին հայոց ՌՆԿԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1668